

Այստեղից չպետք է հետևենք, որ գանձվող շիզիեի գումարը եղել է 25 ակչե: Ըստ Բիթլիսի կանուն-նամեի, մինչև 17-րդ դարի սեղի հայերից գանձել են 35-ական ակչե, մի այլ տեղից՝ 55-ական ակչե¹:

Իսկ այդ նույն ժամանակ, Շերեֆ Ուլղիյի վկայությամբ, Բիթլիսի վիլայեթի ընդհանուր հաշվառումից հետո Բիթլիս քաղաքի 4000 «անհավատ հայերից» գանձել են 70-ական ակչե շիզիե²:

16-րդ դարի վերջում պետական գանձարանի գերածախսերի ու առաջ եկած դեֆիցիտի հետևանքով, պետությունը քրիստոնյա հպատակներից որպես շիզիե, Կոչիբեյի ասելով, գանձել է մինչև իսկ 240-ական ակչե³:

Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ պետական դեֆիցիտը ծածկելու կարևորագույն աղբյուրը, Օսմանյան կայսրության մեջ հանդիսանում է շիզիե հարկի գումարի ավելացումը:

«Եթե պետությունը գրամի կարիք ունենա,— գրում է Էբասիե Էլեասը, 17-րդ դարի Թուրքիայի ներքին կյանքը ուսումնասիրած հեղինակը,— ապա այս տեսակի հարկը (շիզիե) կրկնապատկվում է: Եվ այդ կարիքը, որը հաճախ է ծնվում, չունի այլ աղբյուր, քան այն մարդու երեակալությունը, որին հանձնարարված է այդ տեսակի հարկի գանձման վարչությունը»⁴:

«Ձիզիե»ի գանձումը Թուրքիայում երբեք չի տրամադրվել զահմներին ու թիմարյութներին, այն միշտ հանձնարարվել է պետական հատուկ պաշտոնյաներին: Միայն Հարավային Հայաստանի որոշ մասերում, օրինակ՝ Բիթլիսում, ուր փաստորեն տեր ու տնօրեն էին քուրդ բեկերը, Էվլիա Չելեբեի ասելով, քրիստոնյա հպատակներից գանձված շիզիեի գումարի կեսը հանձնվում էր նրանց⁵:

Թուրքիայում քրիստոնյա հպատակների համար փաստորեն գլխահարկ էր նաև «խապենջը»: Բառի իմաստն ու նրա ծագումը մինչև այժմ չի լուծված: Ենթադրվում է, որ դա պարսկերեն բառ է բաղկացած երկու բառից՝ «իզ»՝ որ նշանակում է «ից» և «պենջ»՝ «հինգ», այսինքն հինգից մեկը: Նվաճումների հետևանքով իրենց ձեռքն ընկած գերիներից թուրքերը վերցնում էին կամ հնգից մեկին՝ տարբեր ծառայությունների, իսկ հետագայում նաև բանակի շարքերը լրացնելու նպատակով, կամ թե լուրաքանչյուր գերուն գնահատելով 125 ակչե՝ վերցնում էին նրա արժեքի մեկ հինգերորդը, այսինքն 25 ակչե և դա կոչվում էր պենջիկ⁶: Ոմանք ենթադրում են, որ «պենջիկ» ու «խապենջը» մինչև 17-րդ դարի հասկացողություններն են, հետևաբար, «խապենջը» վերցվում էր քրիստոնյա հպատակներից, քանի որ թուրքերը նրանց համարում էին իրենց մշտական գերիները:

Վերջերս, հայտնի արևելագետ Պոլ Վիտակը իր «Մանկահավաքը և շարիան» հոդվածում գտնում է, որ «խապենջը» ու «պենջիկը» տարբեր հասկացողություններ են, և որ «խապենջը» բառը հավանաբար սլավոնական ծագում

¹ Bitlis kanunu (Om. L. Barkan, s. 93).

² B. T. Charmoy, Chéref—Nâmeb ou fastes de la nation kourde, par Chéref-Oud-dine, prince de Bitlis: tome II, première partie, St. Pétersbourg, 1873, p. 290—291.

³ В. Д. Смирнов, Кочибей Гёмюрджинский и другие османские писатели о причинах упадка Турции, Спб., 1878, стр. 142—143.

⁴ Ebas i Elias, Etat actuel de l'empire ottoman, Tome I, Paris, 1792, p. 232—233.

⁵ Evlia Celebi, „Siyatname“ cilt IV, s. 89.

⁶ Sk' u Aşik Paşa Zade, Tevarih-'Al-i-Osman, Leipzig, 1927, s. 50, Sêd-ed-din „Tac-üt-tevarih“ cilt I, s. 75, Oruc 'Adil, s. 21—22.